— Աղջի՛, — դարձեալ ձայն տոեց նա, — մի բան պատրաստեցէք դրանք ուտեն, ճանապարհից են գալիս, քաղցած կը լինեն:

Նրա ձայնը աւելի որոտում էր, քան թէ խօսում էր:

— Ճանապարհից եկած հիւրերի նախ ձիերին են կերակրում, — նկատեց վարպետ Փանոսը:

— Այդ որ իմանում ես, դէ՛ վեր կաց, ահա՛ այնտեղ խոտ է դրած, տար ածիր ձիերի առջեւը, — պատասխանեց նա խոտի դէզը ցոյց տալով: — Տեսնում ես, որ ծառաները տանը չեն:

Վարպետ Փանոսը գնաց ձիերին ճարակ տալու: Նա դարձաւ դէպի Ասլանը.

— Զարմանալի մարդիկ են այդ քաղաքացի կոչոածները, սովորել են միշտ գիւղացուն բանեցնել, իսկ իրանք հանգիստ նստել:

Մեր հիւրընկալին կոչում էին Բերզէն-օղլի, որ նշանակում է յոյնի որդի է: Նա ազգով հայ էր եւ նոյն գիւղացի, բայց երկար ժամանակ Յունաստանում ապրելով, եւ Բալկանեան թերակղզու վրայ թափառելով, այդպիսի անուն էր ստացել: Տեսնելով նրան, ես մտաբերում էի «գժինէ, բայց բարեսիրտ, սրտաբաց եւ ուղղախօս քահանայի եւ կոպիտ նաւավարի մէջ այն զանազանութիւնը միայն կար, որ վերջինս սաստիկ մաղձոտ եւ դառնացած էր երեւում ինձ: Գուցէ աստանդական կեանքը, անյաջողութիւնները եւ ինձ անյայտ հանգամանքներ՝ նրա բնաւորութեանը տոել էին այդպիսի կոշտ, կոպիտ եւ մթին յատկութիւններ: Միթէ՞ ծովի, դեղաձիծաղ ալիքների, լուսընկայ գիշերների հետ միշտ գործ ունեցող մարդը, միթէ՞ ծովային զեփիւռի քաղցր մեղեդին միշտ լսող մարդը կարող էր այդպէս մաղձոտ լինել...

— Դուք եղա՞ք Մոնտենեգրոյում, — հարցրեց Ասլանը:

— Եղայ ե՛ւ Մոնտենեգրոյում, ե՛ւ Սերբիայում, ե՛ւ Բոլգարիայում...ամեն տեղ եղա... — պատասխանեց նա տխուր կերպով:

Ասլանը ժպտաց:

— Ինչո՞ւ էք զարմանում, վանեցին ո՞ւր չէ գնում. աշխարհի բոլոր անկիւններում կարելի է տեսնել նրան: Մէկը Հնդկաստանում տեսել էր մի կաղ վանեցի եւ ծիծաղելով ասել էր. «եթէ վանեցու կաղը մինչեւ Հնդկաստան է հասել, ոտնէր ունեցողը Չինաստանից էլ կանցնի»: — Այդպէս է մեր վիճակը:

Վաղ առաւօտեան դուրս գալով Այգեստանից, մենք մի թեթեւ նախաճաշիկ էինք արել: Ասլանը թէեւ ուտելու ցանկութիւն չունէր, բայց ես մի առանձին ախորժակով էի նայում սեղանի վրայ, որ մանկահասակ աղջիկը